

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԶԱՆԻՑ ՕՐ

Կիրակի 23 Փետրուար, 2014-ին, եկեղեցիի քարոյի պաշտամունքը իրապատուկ էր Բ.Զ. շարժումին 133-րդ տարեդարձին առիթով: Զանիցականներ ստանձնեցին քարոյի պաշտամունքէն բաժիններ: Պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Պրն. Պարգեւ Ապաճեան՝ երգեցողութեամբ եւ սաղմոսի ընթերցումով: Օր. Լարա Գրիգորեան փոխադարձաբար ընթերցեց 27-րդ փոխասաց ընթերցուածը: Ապա Աստուածաշունչի ընթերցումը կատարեց Օր. Մարիա Ակիշեան, հիմնուած՝ (Եբր. 12:1-7, Հռովմ. 8:31-39): Բ.Զ. 2013 տարեշրջանի տեղեկագիրը ընթերցեց Օր. Լուսի Մուտարիկեան: Բ.Զ. խումբը հրամցուց երեք երգեր, դաշնակի ընկերակցութեամբ՝ Տիկ. Շողակաթ Սելիմեանի: Պաշտամունքի ընթացքին Տիկ. Բալիկ Բօթովա կատարեց երկու մեներգներ, դաշնակի ընկերակցութեամբ՝ Տիկ. Շողակաթ Սելիմեանի: Օրուան պատգամը մատուց եկեղեցիին հովիւը՝ վեր առնելով՝ «Հաւատքի Ինքնապաշտպանութիւն» նիւթը: Պաշտամունքը վերջ գտաւ նուիրահաւաքումով, յայտարարութիւններով, Տէրունական աղօթք «Հայր Մեր»-ի երգեցողութեամբ եւ հովիւին առաքելական օրհնութեան աղօթքով:



